ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 հունիսի 2026 թվականի N 782 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի N 216-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 16-ի «Հանրակրթական ուսումնական հաստատության և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների պաշտոնների անվանացանկը, դրանց նկարագիրը սահմանելու մասին» N 216-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման 7-րդ կետում «և «Հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոն»» բառերը փոխարինել «, «Հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոն»» բառերով, «համաձայն N 5 հավելվածի» բառերից հետո լրացնել «և «Կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների պաշտոնների անվանացանկը, դրանց նկարագիրը՝ համաձայն N 6 հավելվածի» բառերով.

2) որոշման 8-րդ կետում «NN 4 և 5 հավելվածների անվանացանկերում» բառերը փոխարինել «NN 4, 5 և 6 հավելվածների անվանացանկերում (բացառությամբ սույն որոշման 10-րդ և 11-րդ կետերով սահմանված դեպքերի)» բառերով.

3) որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 9-12-րդ կետերով՝

«9. Սահմանել, որ սույն որոշման հավելվածներով սահմանված՝ «Տնօրեն», «Տնօրենի տեղակալ», «Համակարգող՝ կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների», «Վարչատնտեսական մասի համակարգող» և «Համայնքային ծրագրերի պատասխանատու» հաստիքները համարվում են վարչական հաստիքներ:

10. Սահմանել, որ սույն որոշման N 6 հավելվածի անվանացանկում նշված նախադպրոցական կրթության հաստիքների պաշտոնների նկարագրերը սահմանված են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի մարտի 27-ի «Նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների անվանացանկը և պաշտոնների նկարագրերը սահմանելու և Կրթության և գիտության նախարարի 2011 թվականի ապրիլի 26-ի N 416-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 20-Ն հրամանի N 1 հավելվածում:

11. Սահմանել, որ սույն որոշման N 6 հավելվածի անվանացանկում նշված արտադպրոցական կրթության հաստիքների պաշտոնների նկարագրերը սահմանված են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

12. Սահմանել, որ սույն որոշման հավելվածներով սահմանված պաշտոններ զբաղեցնող աշխատողները պարտավոր են պահպանել և կիրառել հանրակրթական ուսումնական հաստատությունների անվտանգության ապահովման չափանիշների պահանջները՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2026 թվականի ապրիլի 8-ի «Հանրակրթական ուսումնական հաստատությունների անվտանգության ապահովման չափանիշները սահմանելու մասին» N 07-Ն հրամանի պահանջներին համապատասխան:».

4) որոշման N 1 հավելվածի «Հայաստանի Հանրապետության հիմնական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների» անվանացանկ բաժնի 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«8. «Անվտանգ կենսագործունեություն» առարկայի ուսուցիչ և շտաբի պետ (քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ)՝ հանրակրթական ուսումնական հաստատության».

5) որոշման N 1 հավելվածի «Հայաստանի Հանրապետության հիմնական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների» նկարագիր բաժնի՝

ա. 1-ին՝ «Տնօրեն՝ հանրակրթական ուսումնական հաստատության» գլխի 3-րդ կետում ««Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի» բառերը փոխարինել ««Կրթության մասին» օրենքի 40.1-ին հոդվածի 1-ին մասի» բառերով,

բ. 3-րդ՝ «Համակարգող՝ կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների» գլխի 3-րդ կետում «պետք է ունենա բարձրագույն կրթություն՝ մանկավարժական որակավորմամբ» բառերը փոխարինել «պետք է ունենա բարձրագույն կրթություն՝ մանկավարժական որակավորմամբ, և մանկավարժական, գիտական կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ՝ վերջին յոթ տարվա ընթացքում» բառերով,

գ. 4-րդ՝ «Ուսուցիչ՝ հանրակրթական ուսումնական հաստատության» գլխի՝

1) 1-ին կետի 23-րդ ենթակետի «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

2) 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 24-րդ ենթակետով՝

«24) Տվյալ ուսումնական տարվա համար սահմանված ուսումնական պարապմունքների ավարտից հետո ուսուցիչները շարունակում են իրականացնել իրենց աշխատանքային պարտականությունները՝ հունիս ամսին և անհրաժեշտության դեպքում՝ նաև վերաքննությունների ժամանակ: Միևնույն ժամանակ անհրաժեշտության դեպքում, ըստ տնօրենի որոշման, նրանք կարող են տնօրենության

սահմանած կարգով ներգրավվել ավարտական և պետական քննությունների, վերաքննությունների և ստուգումների կազմակերպման և իրականացման գործընթացներում, այդ թվում՝ որպես քննական հանձնաժողովների կամ վերաքննության ուսուցիչներ։».

3) 3-րդ կետը «անձը» բառից հետո լրացնել «, իսկ «Առողջ ապրելակերպ» առարկայի դասավանդման դեպքում՝ վերոնշյալ պահանջներին համապատասխանող և տվյալ առարկայի դասավանդման ոլորտում համապատասխան վերապատրաստում անցած, այդ թվում՝ հոգեբանի որակավորում ունեցող անձը» բառերով,

դ. 8-րդ՝ «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑԻՉ (ԶԻՆՂԵԿ)՝ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ» գլուխը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«8. «ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑԻՉ ԵՎ ՇՏԱԲԻ ՊԵՏ (ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲԻ ՊԵՏ)՝ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ

1. Աշխատանքային գործառույթները՝

1) իրականացնում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը՝ հանրակրթության պետական չափորոշչին և «Անվտանգ կենսագործունեություն» առարկայի չափորոշչին և ծրագրերին համապատասխան.

2) իրականացնում է տվյալ ուսումնական տարվա դասաբաշխմամբ իրեն հատկացված դասարանների «Անվտանգ կենսագործունեություն» առարկայի թեմատիկ պլանավորումը.

3) իրականացնում է «Անվտանգ կենսագործունեություն» առարկայից բոլոր դասերի պլանավորումները (գրավոր).

4) ղեկավարում է «Անվտանգ կենսագործունեություն» առարկայի խմբակների և ճամբարների աշխատանքները.

5) հաշվառում և պահպանում է ուսումնական հաստատության զենքը, փոքր տրամաչափի օդամղիչ հրացանը, դրանց փամփուշտները՝ համաձայն «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների.

6) ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի հետ միասին կազմակերպում է ներդպրոցական միջոցառումներ՝ համաձայն տնօրենի կողմից հաստատված աշխատանքային պլանների.

7) սովորողներին մասնակից է դարձնում ոլորտի մրցումներին, խաղերին, ճամբարներին և օլիմպիադաներին.

8) ապահովում է կցագրված զորամասի, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության (այսուհետ՝ Զ և ԶՀ ծառայություն) համապատասխան տարածքային ստորաբաժանման և ՀՀ ներքին գործերի նախարարության Փրկարար ծառայության համապատասխան տարածքային ստորաբաժանման հետ համագործակցությունը.

9) ապահովում է այլ ձեռնարկությունների, կազմակերպությունների հետ համագործակցությունը՝ «Անվտանգ կենսագործունեություն» առարկայի դասավանդման որակը բարելավելու նպատակով.

10) նախազորակոչային տարիքի պատանիների զինվորական հաշվառման նպատակով՝ հաստատության դասղեկների (կուրսղեկների, ռազմագիտական ուղղվածությամբ մասնագիտացված ուսումնական հաստատություններում՝ դասակի հրամանատարների) օգնությամբ նախապատրաստում է անհրաժեշտ փաստաթղթերը և սահմանված ժամանակահատվածում ապահովում պատանիների ներկայությունը Զ և ԶՀ ծառայություն.

11) աջակցում է անվտանգ կենսագործունեության և ռազմագիտական ուղղությամբ պատանիների մասնագիտական կողմնորոշման աշխատանքներին.

12) համագործակցում է հաստատության մյուս մանկավարժների, հոգեբանի, սովորողների ծնողների հետ՝ սովորողների «Անվտանգ կենսագործունեություն» առարկայի ուսուցման կազմակերպման և հայրենասիրական դաստիարակության հարցերում.

13) համագործակցում է իր տարածքի ուսումնական հաստատությունների «Անվտանգ կենսագործունեություն» առարկան դասավանդող գործընկերների (քաղաքացիական պաշտպանության շտաբի պետերի) և այլ մասնագետների հետ՝

փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով.

14) մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին.

15) կազմակերպում և համակարգում է ուսումնական հաստատության քաղաքացիական պաշտպանության շտաբը և շտաբի աշխատանքները.

16) ամառվա ընթացքում մասնակցում է ավագ դպրոցում սովորողների համար կազմակերպվող «Անվտանգ կենսագործունեություն» առարկայի գործնական և ուսումնամարզական պարապմունքներին (ուսումնական ճամբար):

2. Հաստատության «Անվտանգ կենսագործունեություն» առարկայի ուսուցչի և քաղաքացիական պաշտպանության շտաբի պետի գիտելիքներին, կարողություններին և հմտություններին ներկայացվող ընդհանրական պահանջները՝

1) Հաստատության շտաբի պետի պաշտոնն զբաղեցնողը պետք է իմանա ստորև նշված նորմատիվ իրավական ակտերի այն դրույթները, որոնք վերաբերում են կրթության բնագավառին և կանոնակարգում են պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները՝

ա. «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին», «Զենքի շրջանառության կարգավորման մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Տեսչական մարմինների մասին», «Աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության մասին» օրենքները, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը, «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը,

բ. հանրակրթության պետական չափորոշչով սահմանված միջնակարգ կրթության շրջանավարտի ակնկալվող կարողունակությունները և հանրակրթական հիմնական ծրագրերի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները, սովորողների ուսումնառության արդյունքների գնահատման սկզբունքները,

գ. «Անվտանգ կենսագործունեություն» առարկայի չափորոշչի և ծրագրերի պահանջները, իր պաշտոնային պարտականություններին վերաբերող՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի համապատասխան նորմատիվ ակտերը, իրավական այլ փաստաթղթեր,

դ. մանկավարժության տեսության և մեթոդիկայի, հոգեբանության, առաջին օգնության հիմունքները,

ե. աշխատողների անվտանգության ապահովման, առողջության պահպանման, սովորողների կյանքի և առողջության պահպանման կանոնները:

3. Որակավորման նվազագույն պահանջները՝

Հաստատության շտաբի պետի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն կրթություն և սպայական կոչում:»,

ե. 9-րդ՝ «Գրադարանավար՝ հանրակրթական ուսումնական հաստատության» գլխի՝

1) 1-ին կետի 11-րդ ենթակետի «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

2) 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 12-րդ ենթակետով՝

«12) Տվյալ ուսումնական տարվա համար սահմանված ուսումնական պարապմունքների ավարտից հետո գրադարանավարը շարունակում է իրականացնել իր աշխատանքային պարտականությունները հունիս ամսին և անհրաժեշտության դեպքում՝ վերաքննությունների ժամանակ՝ ապահովելով գրադարանային ռեսուրսների հասանելիությունն ու համապատասխան նյութերի տրամադրումը և աջակցելով քննությունների ու վերաքննությունների գործընթացի անխափան կազմակերպմանը: Կրթահամալիրի դեպքում գրադարանավարի համար կարող է սահմանվել երկարացված աշխատանքային ժամանակահատված՝ «Աշխատանքային օրենսգրքի» պահանջներին համապատասխան:»,

զ. 11-րդ՝ «Ուսուցչի օգնական՝ հանրակրթական ուսումնական հաստատության» գլխի 3-րդ կետի 1-ին ենթակետը «ստաժ» բառից հետո լրացնել «կամ բարձրագույն կրթություն և մանկավարժահոգեբանական և ուսումնամեթոդական հմտություններ ապահովող առնվազն 30 կրեդիտ» բառերով,

է. 14-րդ՝ «Դասարանի ղեկավար (դասղեկ կամ դասվար)՝ հանրակրթական ուսումնական հաստատության» գլխի 3-րդ՝ «Որակավորման պահանջը՝» կետով շարադրվող պարբերությունը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«Դասղեկի (դասվարի) պաշտոնը կարող է զբաղեցնել «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի պահանջներին համապատասխանող անձը կամ այն անձը, որն ունի բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական (կամ ուսուցչական) կամ գիտամանկավարժական գործունեության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ, կամ ունի բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում առնվազն երեք տարվա դասղեկի գործունեության փորձ:».

6) որոշման N 3 հավելվածի «Հայաստանի Հանրապետության հիմնական ծրագրեր իրականացնող (վարչատնտեսական կառավարման համակարգի չանցած) հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների» նկարագիր բաժնի 1-ին՝ «Տնօրեն՝ հաստատության» գլխի՝

ա. 1-ին կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«**1. Աշխատանքային գործառույթները՝**

1) խորհրդին է ներկայացնում ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացումն ապահովող տարեկան գործողությունների ժամանակացույցը.

2) դպրոցի ուսումնական պլանի հիման վրա կրթության կառավարման տեղեկատվական համակարգում իրականացնում է դասաբաշխում, որի հիման վրա ձևավորվում է տարիֆիկացիան.

3) կրթության կառավարման տեղեկատվական համակարգում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության հիմնական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկի հիման վրա մուտքագրում է ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ հաստիքները.

4) հսկողություն է իրականացնում ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սովորողների ուսումնական ծանրաբեռնվածության, առաջադիմության և հաստատության ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնների նկատմամբ.

5) խորհրդի հավանությանն է ներկայացնում դպրոցական մակարդակում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կազմը.

6) մանկավարժական խորհրդի ներկայացմամբ հաստատում է դպրոցի (այդ թվում՝ նախակրթարանի) ուսումնական պլանը, ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը և տնօրենի տեղակալի, դասղեկների, առարկայական մեթոդական միավորումների նախագահների ու մանկավարժական աշխատողների հաշվետվությունները.

7) մասնակցում է խորհրդի նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով.

8) աջակցում է դպրոցի խորհրդակցական մարմինների աշխատանքներին.

9) նախարարի 2013 թվականի ապրիլի 15-ի N 396-Ն հրամանով հաստատած՝ ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգի հիման վրա մշակում և խորհրդի հաստատմանն է ներկայացնում դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար անցկացվելիք մրցույթի կարգը, ինչպես նաև խորհրդի հաստատմանն է ներկայացնում դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները.

10) համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի՝ անցկացնում է ուսուցչի թափուր տեղի համար մրցույթը, մանկավարժական աշխատողների, էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետի և գործավարի (օգնականի), իր տեղակալի, մասնաճյուղի, կառուցվածքային ստորաբաժանումների (առարկայական մեթոդական միավորումների) ղեկավարների, դասղեկների ընտրությունը, կնքում և լուծում է աշխատանքային պայմանագրերը, բաշխում աշխատանքը, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

11) ղեկավարում է մանկավարժական խորհրդի և համակարգում առարկայական մեթոդական միավորումների աշխատանքները.

12) կազմում է ուսումնական պարապմունքների դասացուցակը (կամ ապահովում է ուսումնական պարապմունքների դասացուցակի կազմումը) և ուսումնադաստիարակչական աշխատանքների վիճակի մասին հաշվետվությունները.

13) խրախուսում և խթանում է աշխատողների ստեղծագործական նախաձեռնությունները.

14) աջակցում է ուսուցիչներին՝ մասնակցելու հերթական և կամավոր ատեստավորումներին, ինչպես նաև տարակարգ ստանալու նպատակով հայտ ներկայացնելու համար անհրաժեշտ աշխատանքների կատարմանը.

15) խրախուսում է մասնակցային կառավարումն ուսումնական հաստատության խորհրդակցական մարմիններում.

16) իրականացնում է վերահսկողություն դասավանդման բովանդակության, սովորողների գիտելիքների յուրացման որակի, առաջադիմության, նրանց վարքի, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման, դպրոցի աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

17) ապահովում է արտադասարանական խմբակների և ուսումնական լաբորատորիաների, մասնագիտական կողմնորոշման կենտրոնների բնականոն գործունեությունը.

18) ուսումնական պլանին համապատասխան՝ ապահովում է (նախադպրոցական) հանրակրթական ծրագրերի (հիմնական և լրացուցիչ) իրականացումը, կրթական գործընթացի կազմակերպումը և կրում է պատասխանատվություն կրթության որակի և բովանդակության համար.

19) ապահովում է լիազորված մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող հանձնարարականների կատարումը.

20) ապահովում է դպրոցում բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորումը.

21) ապահովում է դպրոցում իր գործառույթներից բխող՝ գործածության ենթակա փաստաթղթերի վարումը և պահպանումը.

22) սահմանված կարգով ձևավորում է դպրոցի սովորողների համակազմը, օրենսդրությամբ սահմանված կարգով քայլեր է ձեռնարկում նրանց սոցիալական

և հոգեբանական պաշտպանվածության ապահովման ուղղությամբ, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթություն և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ ստանալու իրավունքի իրացման ապահովման համար՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սովորողի (ընտանիքի) հայտնաբերման դեպքում երեք աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է տարածքը սպասարկող խնամակալության և հոգաբարձության մարմնին.

23) օրենքով իրեն վերապահված գործառույթների շրջանակներում ներկայացնում է դպրոցը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններում և այլ կազմակերպություններում, տալիս է լիազորագրեր.

24) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

25) խորհրդի քննարկմանն է ներկայացնում ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվությունը, արտաքին և ներքին գնահատման արդյունքները.

26) ապահովում է բյուջետային հատկացումների, հիմնադրի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից օրենքով սահմանված կարգով ստացված միջոցների արդյունավետ օգտագործումը, ուսումնանյութական բազայի հաշվառումը, պահպանումը, համալրումը.

27) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է դպրոցի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

28) սահմանում է դպրոցի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը.

29) ապահովում է հաշվապահական հաշվառում վարելը, ֆինանսական հաշվետվություններ պատրաստելն ու ներկայացնելը.

30) իրականացնում է օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ։»,

բ. 3-րդ կետում ««Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի» բառերը փոխարինել ««Կրթության մասին» օրենքի 40.1-ին հոդվածի 1-ին մասի» բառերով.

7) որոշման N 5 հավելվածի «Հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական աշխատողների պաշտոնների նկարագիր բաժնի 1-ին՝ «Տնօրեն» գլխի 3-րդ կետում ««Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի» բառերը փոխարինել ««Կրթության մասին» օրենքի 40.1-ին հոդվածի 1-ին մասի» բառերով:

2. Որոշումը լրացնել N 6 հավելվածով՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

04.06.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ